



ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկաների հիման վրա, ինչպես նաեւ հաշվի առնելով պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի շրջանակում կնքված համաձայնագրերի պահանջները:





- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերջին անգամ վերանայվել են ուժի մեջ են մտել 2018 թվականի փետրվարի 1-ից, իսկ սպառողներին վաճառվող Էլեկտրական Էներգիայի սակագները՝ 2017 թվականի փետրվարի 1-ից:
- Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Էլեկտրաէներգիայի սակագները կարող են վերանայվել 6 ամսից ոչ շուտ, սակայն ՀԾԿՀ-ն սովորաբար Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերանայում է տարեկան արդյունքներով:
- Հաշվի առնելով նշվածը՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ից ՀԾԿՀ-ի նախաձեռնությամբ սկսվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցողների սակագների եւ բաշխողի սակագնային մարժայի վերանայման գործընթաց:



2019թ. փետրվարի 1-ից մինչև 2020թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վրա Էական ազդեցություն ունեցող գործոնները դասակարգենք հետևյալ հիմնական խմբերում՝

- Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն,
- կուտակված մաշվածության արդյունքում շահույթի նվազում,
- վերջին տարվա ընթացքում իրականացված կապիտալ ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում,
- ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն,
- միջուկային վառելիքի եւ դրա պահպանմանն ուղղված ծախսերի փոփոխություն,
- աշխատավարձի գծով ծախսի կրճատում,
- շահույթի նորմայի կրճատում,
- ՀԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի սակագնային մարժանների տարբերության փոխհատուցում,
- ՎԷ ռեսուրսներով գործող Էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագների աճ,
- այլ ծախսային հոդվածների փոփոխություն:



Սակագների հաշվարկների հիմքում դրվող Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կանխատեսվող հաշվեկշիռը կազմվում է ՀԾԿՀ-ի 09.08.2017թ. №344Ն որոշմամբ հաստատված Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առեւտրային կանոնների 3-րդ բաժնի համաձայն: Մասնավորապես,

- ⌚ ՀԷՑ-ը կազմում եւ ներկայացնում է սակագնային տարվա համար սպառողների պահանջարկը բավարարելու նպատակով բաշխման ցանցեր Էլեկտրաէներգիայի առաքման կանխատեսվող մեծությունների վերաբերյալ տեղեկատվությունը.
- ⌚ Հաշվարկային կենտրոնը համակարգի օպերատորին է ներկայացնում հաղորդման ցանցում Էլեկտրաէներգիայի կորուստների կանխատեսվող մեծությունները, ինչպես նաեւ մինչեւ 30 ՄՎտ հզորությամբ կայաններից Էլեկտրաէներգիայի առաքման կանխատեսումները.
- ⌚ 30 ՄՎտ եւ ավելի հզորությամբ արտադրող կայանները համակարգի օպերատորին են ներկայացնում Էլեկտրաէներգիայի արտադրության եւ առաքման կանխատեսվող մեծությունները, կայանների սեփական կարիքները եւ շուկայի առեւտրային կանոններով պահանջվող այլ տեղեկատվություն.
- ⌚ Համակարգի օպերատորը սակագնային տարվա համար կազմում է Էլեկտրաէներգիայի տարեկան հաշվեկշիռը՝ առաջնորդվելով նվազագույն ծախսերով Էլեկտրաէներգիայի արտադրման սկզբունքով եւ Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշների ապահովման պայմաններով.
- ⌚ Համակարգի օպերատորի կողմից կազմված Էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կանխատեսվող հաշվեկշիռը ներկայացվում է ՀԾԿՀ, որն էլ դրվում է Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների հաշվարկների հիմքում:



Այսպիսով, 01.02.2019-01.02.2020թթ. ժամանակահատվածի համար կազմված Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման հաշվեկշիռը (կառուցվածքի փոփոխությունը) համակարգի վրա ունեցել է **դրական ազեցություն՝ շուրջ 5.9 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնում է **1.36 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող Էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը


№	Անվանումներ	01.02.2018- 01.02.2019 սակագնային տարի	01.02.2019- 01.02.2020 սակագնային տարի	Տարբերու թյուն
		մլն կՎտժ	մլն կՎտժ	մլն կՎտժ
1	ԸՆԴԱՄԵՆԸ Էլեկտրաէներգիայի առաքում, այդ թվում՝	6339.18	5965.28	-373.9
1.1	«ՀԱԷԿ» ՓԲԸ	1884.40	2092.30	+207.9
1.2	«Երեւանի ԶԷԿ» ՓԲԸ	1213.56	1008.09	-205.47
1.3	«Հրազդան-5» կայան	651.64	422.97	-228.67
1.4	«ՀրազԶԷԿ» ԲԲԸ	189.15	70.92	-118.23
1.5	«ՄԷԿ» ՓԲԸ	394.00	380.00	-14.0
1.6	«ՔոնյոնրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ	1013.40	974.12	-39.28
1.7	Փոքր կայաններ եւ ներկրում	993.03	1016.88	+23.85
2	Կորուստները հաղորդման ցանցում	105.75	104.81	-0.94
3	Մուտքը բաշխիչ ցանց	6233.43	5860.46	-372.97




Էլեկտրաէներգետիկական համակարգի 2019թ. սակագների վերանայում

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող
Էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

01.02.2018-01.02.2019 սակագնային տարի



01.02.2019-01.02.2020 սակագնային տարի







Էլեկտրաէներգետիկական համակարգի 2019թ. սակագների վերանայում

Արտադրող կայաններից առաքվող (ներառյալ արտահանման նպատակով)
Էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

01.02.2018-01.02.2019 սակագնային տարի




01.02.2019-01.02.2020 սակագնային տարի





Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների հաշվարկում **կուտակված մաշվածության արդյունքում շահույթը նվազել է 0.9 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.2 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):


մլն դրամ





Վերջին տարվա ընթացքում իրականացված կապիտալ ներդրումների արդյունքում մաշվածության և շահույթի գումարները **ավելացել են շուրջ 2.8 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 0.65 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):


մլն դրամ





ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերն **ավելացել են շուրջ 4 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **ավելացնում է 0.91 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):


մլն դրամ





«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում միջուկային վառելիքի ձեռքբերման եւ դրա պահպանմանն ուղղած ծախսերը, գործող սակագնի հաշվարկում ներառված ծախսերի նկատմամբ, **ավելացել են շուրջ 4.3 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի)՝ վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **ավելացնելով 0.98 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Ավելացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող սակագներում նշված ծախսերը նախատեսվել էին ավելի քիչ, քան տվյալ տարվա պայմանագրային մեծությունն էր՝ հաշվի առնելով նախորդ սակագներով կուտակված գումարները, իսկ 01.02.2019թ.-01.02.2020թ. սակագնային տարում նշված ծախսերը նախատեսվել են պայմանագրային մեծության չափով:



«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության կողմից իրականացվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, աշխատողների թվաքանակը կրճատվել է 70-ով, որի արդյունքում **աշխատավարձի գծով ծախսը նվազել է 0.17 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի):

Նշված ծախսի կրճատումը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.04 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության հետ քննարկումների արդյունքում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի **շահույթի նորմայի մեծությունը նվազեցվել է 2%-ով** (հարկումից հետո)՝ սակագների հաշվարկներում կիրառելով ընկերության սակագնային մարժայի մեթոդիկայով ամրագրված նվազագույն մեծությունները՝ ՀՀ դրամով կատարված ներդրումների նկատմամբ՝ 12% (հարկումից հետո), արտարժույթով կատարված ներդրումների նկատմամբ՝ 10% (հարկումից հետո): Արդյունքում, ընկերության սակագնային մարժայի հաշվարկներում **շահույթի մեծությունը նվազել է շուրջ 2.5 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.59 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



2017-2018 սակագնային տարիներին Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի եւ հաշվարկային սակագնային մարժաների տարբերության հետեւանքով ձեւավորվել է լրացուցիչ օգուտ, որն ընկերության սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ հաշվարկվել է շուրջ **2.2 մլրդ դրամ**:


Միեւնույն ժամանակ, 2018թ. սակագնային մարժայի հաշվարկներում ընկերության հասույթից արդեն իսկ նվազեցված է շուրջ **1.5 մլրդ դրամ** նախորդ տարիներն ձեւավորված լրացուցիչ օգուտը, որը պետք է դուրս գա հաշվարկներից եւ փոխարենը ներառվի **2.2 մլրդ դրամ** նվազեցումը:

Ուստի, 01.02.2019-01.02.2020թթ. ժամանակահատվածի սակագնային մարժայի հաշվարկներում Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում **լրացուցիչ նվազեցվող օգուտը կազմում է շուրջ 0.7 մլրդ դրամ**, որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը նվազեցնում է 0.17 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):


1502,2 - 2247,3 = - 745,1 մլն դրամ

01.11.2017թ. - 01.11.2018թ. ժամանակահատվածում ՀԷՑ-ի փաստացի եւ հաշվարկային սակագնային մարժաների տարբերության հետեւանքով լրացուցիչ օգուտի ձևավորումը հիմնականում պայմանավորված է արտադրության կառուցվածքի հետևյալ փոփոխությամբ՝

01.11.2017-01.11.2018 հաշվարկային



01.11.2017-01.11.2018 փաստացի



ՎԷ ռեսուրսներով գործող Էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագների աճի արդյունքում նշված **կայաններից** Էլեկտրաէներգիայի **գնման ծախսն ավելանում է շուրջ 0.2 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը ավելացնում է 0.05 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ **ծախսային հոդվածների վերանայման արդյունքում շուրջ 2.6 մլրդ դրամով (առանց ԱԱՀ-ի) ծախսերի** կրճատումը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.6 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Այսպիսով՝



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Զափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ	մլն դրամ	17024.21	24038.23	+7014.03
1.1	Վառելիքի ծախս	մլն դրամ	3163.48	6540.59	+3377.11
1.2	Վառելիքի պահպանմանն ուղղված ծախսեր	մլն դրամ	201.41	1080.47	+879.06
1.3	Աշխատավարձ	մլն դրամ	6408.00	6408.00	0.00
1.4	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	3905.62	3550.19	-355.43
1.5	Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր	մլն դրամ	1236.00	4434.73	+3198.73
1.6	Մաշվածությունն եւ շահույթ	մլն դրամ	177.84	207.62	+29.78
1.7	Այլ ծախսեր	մլն դրամ	1931.85	1816.63	-115.22
2	Էլեկտրական էներգիայի առաքում	մլն կՎտժ	1884.40	2092.30	+207.90
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	9.034	11.489	+2.455



«Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ	մլն դրամ	35731.47	29287.95	-6443.52
1.1	Վառելիքի ծախս	մլն դրամ	23883.73	16233.02	-7650.71
1.2	Աշխատավարձ	մլն դրամ	516.0	520.8	+4.8
1.3	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	3495.52	2806.28	-689.24
1.4	Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր	մլն դրամ	4761.83	4874.13	+112.3
1.5	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	1463.9	1839.95	+376.05
1.6	«Տրանսգազ», «Գազարոմ Արմենիա», «ԲԷՑ», «ԷԷՅՕ» եւ «Հաշվարկային կենտրոն» ընկերությունների մատուցած ծառայության դիմաց վճարումներ	մլն դրամ	1096.7	2596.08	+1499.38
1.7	Այլ ծախսեր	մլն դրամ	513.79	417.69	-96.1
2	Էլեկտրական էներգիայի առաքում	մլն կՎտժ	1213.56	1008.09	-205.47
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	29.444	29.053	-0.391

«ՀրազՁԷԿ» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Զափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«ՀրազՁԷԿ» ՓԲԸ	մլն դրամ	10341.89	5659.57	-4682.31
1.1	Վառելիքի ծախս	մլն դրամ	5956.33	2246.13	-3710.2
1.2	Պարապուրդում գնվող սարքավորումներն աշխատողնակ վիճակում պահելու ծախս	մլն դրամ	546.16	183.5	-362.66
1.3	Աշխատավարձ	մլն դրամ	1420.8	1420.8	0.0
1.4	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	692.89	154.23	-538.66
1.5	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	1159.87	1176.87	+17.0
1.6	Այլ ծախսեր	մլն դրամ	565.84	478.05	-87.79
2	Էլեկտրական էներգիայի առաքում	մլն կՎտժ	189.15	70.92	-118.23
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	54.676	79.802	+25.126

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի ծախսային
հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ**

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Զափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«Հրազդան-5» կայան	մլն դրամ	20513.63	13391.57	-7122.05
1.1	Վառելիքի ծախս	մլն դրամ	15533.37	10140.50	-5392.87
1.2	Աշխատավարձ	մլն դրամ	464.05	475.80	+11.75
1.3	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	881.46	903.77	+22.31
1.4	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	3542.77	1770.74	-1772.03
1.5	Այլ ծախսեր	մլն դրամ	91.98	100.78	+8.80
2	Էլեկտրական Էներգիայի առաքում	մլն կՎտժ	651.64	422.97	-228.67
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	31.48	31.661	+0.181

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«ՄԷԿ» ՓԲԸ	մլն դրամ	6339.96	6456.90	+116.94
1.1	Աշխատավարձ	մլն դրամ	1099.20	1099.20	0.0
1.2	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	840.23	857.19	+16.96
1.3	Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր	մլն դրամ	520.62	530.37	+9.75
1.4	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	3319.68	3398.51	+78.83
1.5	Այլ ծախսեր	մլն դրամ	560.24	571.63	+11.39
2	Էլեկտրական Էներգիայի առաքում	մլն կՎտժ	394.0	380.0	-14.0
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	16.091	16.992	+0.901

«Քոնսթոլըրգլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲԸ-ի հասույթի փոփոխություն

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018-01.02.2019 սակագին	01.02.2019-01.02.2020 սակագին	Տարբերություն
1	«Քոնսթոլըրգլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲԸ	մլն դրամ	14804.35	14605.71	-198.64
2	Էլեկտրական Էներգիայի առաքում	մլն կՎտժ	1013.4	974.12	-39.28
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	14.609	14.994	+0.385

Փոքր կայաններից ձեռքբերվող եւ ներկրվող Էլեկտրաէներգիայի ծախսի փոփոխություն

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018-01.02.2019 սակագին	01.02.2019-01.02.2020 սակագին	Տարբերություն
1	Փոքր կայաններ եւ ներկրում	մլն դրամ	22301.32	22975.76	+674.44
2	Էլեկտրական Էներգիայի առաքում	մլն կՎտժ	993.03	1016.88	+23.85
3	Միադրույք հաշվարկային սակագին	դր/կՎտժ	22.458	22.594	+0.136

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«ԲԷՑ» ՓԲԸ	մլն դրամ	7199.83	7340.71	+140.88
1.1	Աշխատավարձ	մլն դրամ	2280.00	2112.00	-168.00
1.2	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	884.69	737.14	-147.55
1.3	Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր	մլն դրամ	3690.8	4237.12	+546.32
1.4	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	42.89	39.17	-3.72
1.5	Այլ ծախսեր	մլն դրամ	301.46	215.29	-86.17
2	Ներքին շուկայից (ՋԷՑ) ստացվող հասույթ	մլն դրամ	5971.22	6005.68	+34.46
3	Ներքին շուկայի համար Էլեկտրաէներգիայի հաղորդում	մլն կՎտժ	5346.15	4948.39	-397.76
4	Սակագին	դր/կՎտժ	1.1169	1.2137	+0.0968



**«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ծախսային
հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ**

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«ԷԷՅՕ» ՓԲԸ	մլն դրամ	1827.62	1921.34	+93.72
1.1	Աշխատավարձ	մլն դրամ	658.20	658.20	0.0
1.2	Նորոգման եւ կյուրթական ծախսեր	մլն դրամ	236.7	213.9	-22.8
1.3	Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր	մլն դրամ	386.46	444.62	+58.16
1.4	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	92.39	87.14	-5.25
1.5	Այլ ծախսեր	մլն դրամ	453.87	517.48	+63.61
2	Ներքին շուկայից (ՋԷՑ) ստացվող հասույթ	մլն դրամ	1557.38	1622.21	+64.83
3	Ծառայության ամսական վճար	մլն դրամ	129.7813	135.1840	+5.4027



«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	մլն դրամ	289.11	295.13	+6.02
1.1	Աշխատավարձ	մլն դրամ	180.0	189.0	+9.0
1.2	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	14.33	17.16	+2.83
1.3	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	29.26	31.17	+1.91
1.4	Այլ ծախսեր	մլն դրամ	65.52	57.80	-7.72
2	Ներքին շուկայից (ՋԷՑ) ստացվող հասույթ	մլն դրամ	246.36	249.18	+2.82
3	Ծառայության ամսական վճար	մլն դրամ	20.5299	20.7648	+0.2349



**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում
տեղի ունեցած փոփոխություններ**

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Զափի միավոր	01.02.2018- 01.02.2019 սակագին	01.02.2019- 01.02.2020 սակագին	Տարբերությ ուն
1	«ՀԷՑ» ՓԲԸ	մլն դրամ	48796.1	47023.4	-1772.7
1.1	Աշխատավարձ	մլն դրամ	18734.40	18734.40	0.0
1.2	Նորոգման եւ նյութական ծախսեր	մլն դրամ	4323.62	4436.04	+112.42
1.3	ՇՊԾ այլ ծախսեր	մլն դրամ	3769.59	3769.59	0.0
1.4	Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ծախս	մլն դրամ	1836.28	1713.16	-123.12
1.5	Մաշվածություն եւ շահույթ	մլն դրամ	21634.38	20617.47	-1016.91
1.6	Փոխհատուցման ենթակա գումար	մլն դրամ	-1502.18	-2247.26	-745.08
3	Ներքին շուկայում էլեկտրաէներգիայի իրացում	մլն կՎտժ	5518.3	5192.2	-326.1
4	Սակագնային մարժա	դր/կՎտժ	11.646	11.786	+0.14





Էլեկտրաէներգիայի սակագների վրա ազդող գործոնները

ԴՐԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

Արտադրության եւ սպառման
կառուցվածքի փոփոխություն

- 1.36 դրամ/կՎտժ

Կուտակված մաշվածության
արդյունքում շահույթի նվազում

- 0.2 դրամ/կՎտժ

ԲԷՑ-ում աշխատավարձի ծախսի
փոփոխություն

- 0.04 դրամ/կՎտժ

ՀԷՑ-ի շահույթի նորմայի կրճատում

- 0.59 դրամ/կՎտժ

ՀԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի
սակագնային մարժայի տարբերություն

- 0.17 դրամ/կՎտժ

Այլ ծախսերի փոփոխություն

- 0.6 դրամ/կՎտժ

Նոր ներդրումների արդյունքում
մաշվածության եւ շահույթի
ավելացում

+ 0.65 դրամ/կՎտժ

Վարկերի մարման եւ սպասարկման
ծախսերի փոփոխություն

+ 0.91 դրամ/կՎտժ

Միջուկային վառելիքի մասով ծախսերի
փոփոխություն

+ 0.98 դրամ/կՎտժ

ՎԷՌ կայանների սակագների աճ

+ 0.05 դրամ/կՎտժ

Համակարգի ընդհանուր
դրական արդյունք

-1.6 մլրդ դրամ
(- 0.306 դր/կՎտժ՝ առանց ԱԱՀ կամ
- 0.367 դր/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ)

«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Էլեկտրաէներգիայի գնման միջին գնի (ներառյալ ծառայությունների արժեքը), սակագնային մարժայի եւ վաճառքի միջին սակագնի փոփոխություններ


առանց ԱԱՀ-ի

	2018-19թ.	2019-20թ.	Տարբերություն
ՀԷՑ-ի կողմից Էլեկտրաէներգիայի գնման միջին գին	21.630 դրամ/կՎտժ	21.209 դրամ/կՎտժ	- 0.421 դրամ/կՎտժ
	+		+
ՀԷՑ-ի սակագնային մարժա	11.646 դրամ/կՎտժ	11.786 դրամ/կՎտժ	+ 0.14 դրամ/կՎտժ
	=		+
Էլեկտրաէներգիայի վաճառքի միջին սակագին	33.276 դրամ/կՎտժ	33.301 դրամ/կՎտժ (գործող գներով)	- 0.025 դրամ/կՎտժ
		+	=
Համակարգի ընդհանուր դրական արդյունք		- 0.306 դրամ/կՎտժ	- 0.306 դրամ/կՎտժ
		=	
Էլեկտրաէներգիայի վաճառքի 2019թ. միջին սակագին		32.995 դրամ/կՎտժ	




Ներքին շուկայում վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքի վերաբերյալ

առանց ԱԱՀ-ի



Ներքին շուկայում վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքը


դրամ/կՎտժ



- ԱԱՀ
- Բաշխիչ ցանցի շահույթը
- Բաշխիչ ցանցի ծառայության մատուցման ծախսերը
- Էլեկտրաէներգիայի բաշխման ցանցում առաջացող կորուստների և սեփական կարիքների արժեքը
- Էլեկտրաէներգիայի գնման մեծածախ միջին գինը

Սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագներ

ներառյալ ԱԱՀ-ն





2019 թվականի սակագների վերանայման շրջանակում
Էլեկտրաէներգետիկական համակարգում ձևավորված ընդհանուր
դրական արդյունքը հնարավորություն է տալիս՝

ա. բոլոր սպառողների համար Էլեկտրաէներգիայի սակագները
նվազեցնել **0.37 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն),

կամ

բ. սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների
համար Էլեկտրաէներգիայի սակագները նվազեցնել **10.01**
դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):


Նշված հարցը քննարկելով Էներգետիկայի բնագավառում պետական
քաղաքականությունն իրականացնող մարմնի՝ ՀՀ Էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ,
ՀԾԿՀ-ի աշխատակազմն առաջարկվում է համակարգում ձևավորված
ընդհանուր դրական արդյունքն ուղղել միայն **սոցիալապես**
անապահով ընտանիքների սակագների նվազմանը՝

10.01 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ԱԱՀ-ն):



ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ընտանիք համարվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագներ

ներառյալ ԱԱՀ-ն



ՄՆԱՑԱԾ ԲՈԼՈՐ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ վաճառվող էլեկտրական էներգիայի
սակագները մնում են անփոփոխ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

